Նիկողոսյանը և Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 11724/043
Վճիռը կայացվել է. 06.12.2007
Ուժի մեջ է մտել. 06.03.2008

Պաշտոնապես
Հրապարակվել է. ՀՀՊՏ 2009.02.11/8(674)

Փաստերը

Դիմումատուներ Մելքոնյանը և Նիկողոսյանն Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանում որպես պատասխանողներ ներգրավված են եղել քաղաքացիական գործով դատական վարույթում, որի շրջանակներում հայցվորները պահանջել են չեղյալ հայտարարել Մելքոնյանի և Նիկողոսյանի հետ կնքած առուվաճառքի պայմանագիրը և համատեղ սեփականության իրավունքի գրանցման վկայականը: 2003թ.-ի ապրիլի 25-ին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանը բավարարել է հայցվորի պահանջները և չեղյալ է հայտարարել նշված փաստաթղթերը: Մելքոնյանն ու Նիկողոսյանը բողոքարկել են վճիռը: 2003թ.-ի մայիսի 30-ին ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանը ծանուցագիր է ուղարկել երկու դիմումատուներին՝ նրանց տեղեկացնելով, որ գործի վերաքննիչ բողոքի վերաբերյալ նիստը տեղի կունենա 2003թ.-ի հունիս 10-ին, ժամը՝ 11:00-ին, Երևանում: 2003թ.-ի հունիսի 10-ին Քաղաքացիական վերաքննիչ դատարանը որոշել է ուժի մեջ թողնել 2003թ.-ի ապրիլի 25-ի վճիռը: Պատասխանողի ներկայացուցիչը ներկա էր գտնվում նիստին և ներկայացրել էր իր բանավոր փաստարկները և բացատրությունները, իսկ դիմողները ներկա չեն եղել նիստին: Դատական նիստը բացելիս Վերաքննիչ դատարանը նշել է, որ դիմողներն անձամբ ստացել են դատական նիստի մասին ծանուցագիրը, սակայն դատարան չեն ներկայացել: Նիկողոսյանն ու Մելքոնյանը բողոքարկել են Վճռաբեկ դատարան, նշելով, ի թիվս այլ պնդումների, որ պատշաճ ծանուցված չեն եղել դատական նիստի մասին և այդ պատճառով հնարավորություն չեն ունեցել ներկա գտնվել նիստին ու ներկայացնել փաստարկներ: Նրանք պնդել են, որ ծանուցագրերը նրանց են հանձնվել միայն 2003թ.-ի հունիսի 17-ին, ինչը հաստատվում է նաև համապատասխան ծրարով, որի վրա դրված կնիքը վկայում էր, որ ծրարը ստացվել էր հունիսի 17-ին: 2003թ.-ի սեպտեմբերի 26-ին Վճռաբեկ դատարանը, կողմերի բացակայությամբ, քննել ու մերժել է բողոքը և ուժի մեջ է թողել Վերաքննիչ դատարանի վճիռը: Վճռաբեկ դատարանն իր որոշման մեջ չի անդրադարձել 2003թ.-ի հունիս 10-ի նիստին դիմումատուների բացակայության հարցին:

Դատարանի որոշումը

Քաղաքացիական վերաքննիչ դատարանը, դիմումատուների բացակայությամբ նիստ գումարելով, ինչպես հարկն է չի ստուգել, թե արդյոք նրանք պատշաճ կերպով տեղեկացված են եղել նիստի վերաբերյալ: Պատասխանողի ներկայացուցիչը ներկա է եղել նիստին և բանավոր ներկայացրել է իր փաստարկները ու բացատրությունները, որոնց վերաբերյալ դիմումատուները հնարավորություն չեն ունեցել ներկայացնելու իրենց դիրքորոշումը: Նրանք նաև հնարավորություն չեն ունեցել, ի պաշտպանություն իրենց հայցի, ներկայացնել իրենց բանավոր փաստարկները: Այս բացթողումը չի շտկվել նաև փաստով, որ դիմումատուները կարող էին վճիռը բողոքարկել Վճռաբեկ դատարանում, քանի որ վերջինս՝ ի տարբերություն Քաղաքացիական վերաքննիչ դատարանի, չի իրականացնում գործի ամբողջական վերաքննություն: Այս հանգամանքն ավելի է հիմնավորվում, եթե հաշվի առնենք, որ Վճռաբեկ դատարանը լիազորված էր հետ ուղարկել գործը նոր քննության՝ դատավարական իրավունքների խախտման առկայության հիմքով, ինչը և նրանք պահանջել էին իրենց վճռաբեկ բողոքում, և ինչը Վճռաբեկ դատարանը չի արել: Այստեղից հետևում է, որ սույն գործի հանգամանքներում, կողմերի հավասարության սկզբունքը չի հարգվել: Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի խախտում: